ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-245-Ն օրենքի 4-րդ հոդվածում՝

1) աղյուսակից ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագիրը հանել,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրերին դասվող թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման ժամանակ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

1) հինգ տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող՝ 500 դրամ յուրաքանչյուր ձիաուժի համար,

2) 10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող՝ 1500 դրամ յուրաքանչյուր ձիաուժի համար,

3) 15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող՝ 3000 դրամ յուրաքանչյուր ձիաուժի համար։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից։